Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԾԱՆՎՈՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐ

ԶԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՊՂԻՆՁ ՅԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ



891.99
Մ-35

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

60 к.

ՊՐՈԼԵՏԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆՎՈՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԸ

№ 6

891.99
Մ-35

**ԶԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**
(ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ՅԵՐԻՏԲԱՆՎՈՐ)

# ՊՂԻՆՁ ՅԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

.06. 2013

42597

Պետհրատի տպարան
Գլավլ. № 7021 (բ)
Հրատ. № 1973
Պատվ. № 6575
Տիր. 2000

ՀՍԽՀ-ССРА
4593
39

Հանձնված է արտադրության 26/XII 1931 թ. Ստ. Փ. Б.
Ստորագրված է տպելու 29/III 1932 թ.

6 NOV 2011

## ՄՈՒՐՃ ԻՄ

Յես միշտ էլ քեզ եմ սիրել՝
    Մուրճ իմ զնգուն,
Յեռանդս քեզ եմ տվել՝
    Մուրճ իմ զնգուն:

Ուժերս, կամքս եմ ձուլել
    Քո հատու թափին,
Շաչյունիդ՝ յերգս ձոնել
    Մուրճ իմ, մուրճ իմ...

Յես միշտ էլ քեզ եմ սիրել՝
    Մուրճ իմ խինդով,
Վերելքում քեզ եմ յերգել
    Յերգիս շաչյունով:

31 թ., Ալլահվերդի.

## ՄԵՆՔ

Կիրկաներ, կիրկաներ, կիրկաներ,
Ամենուր դղրդը դինամի.
Դե առաջ, իմ շախտյոր ընկերներ,
Նետվում ենք մարտը պղնձի:

Մեր ամեն մի պարկով, հարվածով,
Քանդում ենք պղնձի շերտերը,
Մենք պինդ ենք, ուժեղ ենք ու թափով
Մղում ենք յեռանդով՝ տեմպերը:

Տես ահա ձգվել են շախտերը
Յերկրի սրտի մեջ գալարվում.
Տեմպերը, տեմպերը, տեմպերը—
Շախտերից պղինձ են դուրս բերում:

Շունչ կտանք այդ անշունչ մետաղին
Կհասնի նա վաղը հանդերում,
Մեր ամեն, ամեն մի գյուղին—
Կհասնի պղնձի վողջույնը...

31 թ., Ալլահվերդի.



## ԿՈՄՍՈՄՈԼԸ ՊՂՆՁԻ ՇԵՖ

(ԼԿՅԵՄ համահայաստանյան 7-րդ համագումարի վորոշումը)

Դրոհում է բանակը մեր—
Հանքերում, հանքերում, հանքերում...

1.

Յերկրի սեպացած, ժեռ կրծքին—
Իջնում են բյուր մուրճեր նոր խինդով.
Տանում ենք պայքարը մեր կրկին
Բյուրավոր զարկերի շռինդով:

Կոմյերիտ յեռանդով ու տոկուն—
Քանդում ենք լեռները պղնձյա,
Հրասուր կիրկաներ մեր ձեռքում—
Դրոհում, դրոհում ենք ահա:

Կատարում, տալիս ենք պարտքը մեր՝
Մեր յերկրին պղինձ ենք հասցնում,
Կոմյերիտ խնդությամբ բյուր ձեռքեր—
Պայքարն առաջ են տանում:

2.

Դրոհում է կոմյերիտ բանակը—
Հանքերում, հանքերում, հանքերում.

31 թ., Ալլահվերդի.

## Գ Ի Շ Ե Ր Ը

Շուրջը լեռներին սև մութն է պատել
Ու կատարները նիրհում են տապով,
Այդ մթնում ինչն է՞, ինչն է՞ վառվել,
Վոնց վոր լույսերի ծիծաղուն մի ծով:

Լույսերն են ժպտում, առկայծում ուրախ,
Սիրտ, ի՞նչ ես զգում այդ բռնկումից.
Նրանց շողերն են փռում աջ ու ձախ
Յեվ բերկրությունն է, վոր պահում է ինձ:

Բյուր են լույսերը, ուրախ ու ժպտուն,
Զարկում է սիրտս թովիչ խնդությամբ.
Ո, այն լույսերը, լույսերը ժպտում,
Իմ սիրտն են գերում իրենց եյությամբ.

Ձեռքեր են վառել, վառվում են կրկին
Յեվ լույսերն այն նորեն հրդեհվում.
Ձեռքեր կառուցող, ահա իմ հոգին—
Ձեր հաղթանակող զովքն է յերգում:

Ալլահվերդի—Զորագես, 30 թ.

□ □ □



## ՋՈՒԼԱՐԱՆՈՒՄ

Հազարավոր բանվորներ մկանունքով կստեղծեն
. . . . . . . . . . . . . .
Փոկերը պիրկ կձգվեն ճախարակե-ճախարակ
Ու կհոսին խժալուր ջրվեժներու պես արագ...

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Անսպառելի խինդ կա այնտեղ
Յեվ մուրճերի հատու զնգոց.
Հուր հնոցներ հրշեկ, ահեղ
Ու հրաթեժ պղինձը զոռ:

Թափ են առնում միտք ու մկան
Ու գործում են հազար ձեռքեր.
Այնքան տենդոտ հարվածներ կան,
Անխոնջների անթիվ յերգեր:

Յեվ լցնում են սիրտս նորից՝
Մեքենաներն իրենց յերգով.
Կարծես գոռում, ասում են ինձ
— Հարվածային ենք բոլորով:

Ու գործում են ձեռքերն իմ
Մեքենայիս հատու չեշտով.
Իմ մեքենա, իմ մտերիմ
Առաջ նետվենք մի նոր թափով:

Մեր առաջ մեծ մի ծրագիր,
Պահանջում է ջանք ու լարում.
Պիտի գործենք ու կատարենք
Պլանները մենք այս տարում...։

Անպատմելի խինդ կա այնտեղ
Յեվ մուրճերի հատու ղնդոց.
Հուր հնոցներ հրշեկ, ահեղ
Ու հրաթեժ պղինձը գոռ։

□ □ □



## ԽՈՍՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՀՈՒՅՋԵՐԻՆ

Գիշեր է խոր։ Յեվ լռել են
Աառրյայի ձայներն ահեղ.
Ահա սրտիս դուռն է թակում
Հույզերի մի հսկա հեղեղ։

. . . . . . . . . . . .

Ասում են, որ ինչ էլ լինի
Կյանքում պիտի արի մնաս.
Մեր այս դարում կառուցումի՝
Տեմպերին նոր ուժ ու թափ տաս։

Ձուլվես դարից ու պայքարից։
Ձայնովը քո յեռանդ փռես.
Թափ ու շունչ տաս քնարից,
Միլլիոն սրտեր յերգով այրես։

Միլլիոն սրտեր յերգով այրես
Ու բարձրանաս քո յերգերով,
Շանդալից ձայնդ սփռես—
Քո պայքարով ու քո դարով։

Աշխատանքիդ ընկերներին
Տաս մաքառման հատու տողեր,
Յերգիդ շնչից հին թշնամին
Դեմդ սողա վոնց մի մողես։

Վոր տարածվի յերգը՝ մի կոչ—
Դասակարգի բորբոք սրտում,
Յերգը՝ նետած մի մարտակոչ
Պիտ վորոտա վերջին մարտում :

Դասակարգի, մարտի համար
Յերգը հատու զրահ ու զենք,
Իր չառաչով, շնչով անմար
Պիտի միլլիոն սրտեր հուզե...

Մեր պայքարի ու կառուցման
Քրտինքները յերգին սնունդ·
Թող վորոտա յերգը վառման
Չճանաչի վիհ ու անդունդ :

31 թ., Ալլահվերդի.

□□□



## ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ ՅԵՂԲՈՐՍ

Դու ծաղկում, ծիծաղում, թռվռում ես
Ու բացվում ես մեր թեժ որերի հետ·
Յեղբայր իմ, յեղբայր իմ բերկրում ես
Ու լցվում մեր որերի խնդով :

Այնքան ջահել է դեռ քո հոգին,
Յեղբայր իմ, խնդուն ես, խնդուն·
Դեռ նոր ես դու կապվում կյանքին
— Նոր հուր է վառվում քո սրտում :

Գնում ես հավաքույթ, սովորում
Այնքան ուրախ են որերդ·
Յեղբայր իմ, մեր թեժ որերում—
Ամրանում, աճում են թևերդ :

Դու ծաղկում, ծիծաղում, թռվռում ես
Ու բացվում ես մեր թեժ որերի հետ,
Յեղբայր իմ, յեղբայր իմ բերկրում ես
Ու լցվում մեր որերի խնդով :

Ղարաքիլիսա, Լոռի, 30 թ.

□□□

## ՊՂՆՁԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Ալլահվերդու պղնձահանքերի շախտյորական բանակին

Ձեր կամքին յերգս եմ ձոնում—
Պայքարի կառուցման ընկերներ,
Յերգերիս խոր ու խոր անհունում
Գծվում է ահա դեմքը ձեր...

Յեռնում ու հորդում է ձեր բանակը
Շախտերն ու սիրտը յերկրի.
Տեմպ է ձեր ամեն մի զարկը,
Ձեր զարկը պղնձով է հղի:

Կամքը ձեր մի լեռ է ու գրանիտ,
Պղնձի քրտնաջան պայքարում.
Ձեր խոսքը մի պայթող դինամիտ,
Գալարուն շախտերի խորքերում:

Կոփվում եք մարտումն այս համառ
Ու հույզով գրոհում աննահանջ.
Ձեր դեմքը, ձեր դեմքը պղնձավառ
Պայքարի, գրոհի մարտականչ:

Պղնձի շունչն է ձեր յերգը,
Յեռանդոտ աղաղակը նրա,
Փռում եք պայքարի համերգը՝
Աղաղուն լեռների վրա:



Պայքարում յեռնում եք ժայռերն
Ու ժայռում պղնձի շողումով.
Զարկը ձեր վորքան տեմպ բերե,
Կնետվեք պայքարին նոր ուժով:

---

Ձեր կամքին յերգս ձոնում
Պղնձի քրտնաջան մարտիկներ.
Յերգերիս խոր ու խոր անհունում—
Գծված է ահա դեմքը ձեր...

□□□

## ՄԵՔԵՆԱՅԻՍ

Այնքան խինդ կա քո հևքի մեջ
Երկաթաթև իմ մեքենա.
Ես ուզում եմ լսել անվերջ
Ախորժալուր ձայնդ հիմա:

Քո ամեն մի դարձը տենդոտ
Դարձը տենդոտ տեմպասլաց.
Լցնում է իմ հոգին՝ վառոտ
Ու հույզերս են հորդում անսանձ...

Ես քեզ հետ եմ այս ժխորում,
Քեզ ուղղություն, տեմպ եմ տալիս,
Իմ մեքենա, ձայնդ խորունկ—
Տալիս է իր յեռանդն ինձ:

Մենք անբաժան ու այնքան մոտ,
Հարազատույս իմ մեքենա,
Տալիս եմ քեզ խինդ ու կարոտ,
Մկաններիս ուժը հիմա:

Ալլահվերդի.

□□□



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՎԱԳ

Նորից զարթնեց իմ հոգու մեջ
Անասելի խինդ ու կարոտ.
Ո, ինչ լավ է լսել անվերջ
Գուդոկի կանչն այս առավոտ:

Սիրտս է բերկրում հուզումնալից,
Շտապում եմ հնոցի մոտ,
Այնքան քաղցր, ու քաղցր է ինձ—
Տեսնել հնոցն այս առավոտ:

2.

— Մեքենանե՛ր յերկաթաձիչ
Ու հնոցներ ձեզ բյուր վողջո՛ւյն.
Դուք խնդասիրտ կանչում եք ինձ,
Բերում եմ ձեզ ձեռքերն իմ:

Այնքան քաղցր է ձեզ հետ մենակ
Ջանալ, գործել այս համերգում,
Ուր հարատև շռինդի տակ—
Որերը նոր յերգ են յերգում:

Ալլահվերդի, 31 թ.

□□□

## ԴԱՐՁ

(Նովելլա)

Լույս է հորդում, լույսը․ վառման առավոտ է։
Հանգիստ պառկած է նա անկողնում․
Շախտի գուդոկը տվել է արդեն,
Բայց նա չի վերկենում, չի վերկենում։

Շուռ ու մուռ է գալիս նա իր տեղում,
Հետո անթարթ նայում դեմի պատին,
Այնտեղից ահա նրան է նայում
Ինքը, մեծ ղեկավարը՝ Ստալինը։

Նայում է Ստալինին անդադար,
Հետո հանկարծ կարմրում է․․․ ամոթ․․․
Ծիկնել է դեմքը վոնց վոր կարմիր կրակ,
Դժվար է շնչելը․․․ կրակ ու ամոթ։

Ու նայում է կամաց Ստալինը—
— Գրողո՞վ ես անում ընկեր բանվոր,
Ինչո՞վ պիտի խփենք մեր թշնամուն,
Յեթե վոչ տեմպով ու մեր գործով։

․․․ Ուզո՞ւմ ես թշնամին հաղթի մեզ
Ու շահագործումը փոխ նորից․
Ամո՛թ, ամո՛թ, հազար ամոթ քեզ,
Վոր փախչում ես մեր հսկա գործից։



Հնգամյակը մեր պիտ կատարենք
Ու հասնենք, անցնենք մենք նրանցից,
Ուղին մեր կուռ, կուռ ու անթեք
Տանենք դեպի սոցիալիզմ․․․

․․․ Ամեն վայրկյանը թանգ է, թանգ է,
Պիտ լարենք ինչքան ջանք ու ճիգ,
Յերբ թնդա վերջին ահազանգը—
Ցելնենք վերջին կովի, վերջին մարտի․․․

․․․ Այս յերկիրը քոնն է, քոնը դիկտատուրան,
Հարվածո՞ւմ ես դու քեզ՝ ի՞նչ ես անում,
Յեթե ամեն մեկը դառի քեզ նման—
Կղնանք անկում ու կործանում․․․

Դեռ նայում է պատից Ստալինը հանգիստ
Հայացքում խիստ մի վորոշում,—
Ամաչում է նա այդ, այդ հայացքից
Ցել անկողնուց շտապ վեր է թռչում։

---

Շտապում է շախտը աշխատանքի,
Ու ներկայանում տասնապետին իրենց,
Շուրջը յեռ ու զեռ է։ Ու պղնձահանքի
Տասնապետի առաջ նա կարմրեց։

— Խոսք եմ տալիս պապա՛շ, էլ չե՛մ անի,
Ախ եդ ի՞նչ եմ արել, ախ եդ ինչ եմ արել․
Այսորվանից ինձ էլ գրեք հարվածային,
Թերի պլանները պիտի կատարել։

Ալլահվերդի, 31 թ․

## ԱՐՏԵՐԸ

(«Կոլխոզական նվագներ»-ից)

*Բացվեց լուսե առավոտը մեր հանդերում,*
*Ծիծաղեցին, խոխոջեցին անթիվ ջրեր.*
*Իմ լուսաբաց սրտին նրանք խինդ են բերում*
*Յեվ ուզում եմ յես ել խնդուն՝ յերգեր գրել...*

*Սիրտս հիմի՝ հարվածային թափով վառված—*
*Արեվի պես շողշողում ե մեր դաշտերում.*
*Յերգս հիմի աշխատանքի դրոշին փարված*
*Նոր հուզանքներ ու թռիչքներ ե ստանում:*

*Ջան մեր արտեր պտղատականչ, լայն ու խնդուն*
*Դուք նկարներ կոլխոզային հզոր ուժի.*
*Կրծքումը ձեր համայնական ձեռքն ե թնդում,*
*Վոր հին կյանքի ու խավարի մահը գուժի...*

*Ղամարլու*, 30 *թ.*

□□□



## ՊԼԱՆՆԵՐԻ ՅԵՐԳԸ

*Մղում ենք, մղում ենք տեմպերը,*
*Բայց պլանները կաղում են.*
*Հարվածի՛ր, հարվածե՛նք, ընկե՛ր իմ,*
*Դղրդան թող շախտում ու լաղումը:*

*Հատու յե, խրոխտ ե մեր դարկը,*
*Պլանում՝ դեռ ինչքան ճեղքվածքներ.*
*Մեր շուրջը տեմպերի նոր վազք ե,*
*Պլանը պիտի կատարել:*

*Յերկիրը մեր պղինձ ե ուզում,*
*Նոր թափ տանք հարվածող դարկերին.*
*Բորբոքենք սրտերում նոր հուզում,*
*Պարտքը տանք մեր աճող յերկրին:*

*Պատրաստ ենք, գործում ենք դիրքերում,*
*Մեր դարկից դողում ե պղնձաքարը.*
*Յեռանդով մենք առաջ ենք տանում*
*Պղնձի վճռական պայքարը:*

*Ալլահվերդի.*

□□□

## ԳԱԶԵԼ ՊՂՆՁԱՇՈՒՆՉ

*Նորից պայքար ու դրոհ—պղնձական աշխարհում,*
*Աշխատանքի թափը նոր—պղնձական աշխարհում:*

*Անօրինակ մի կռիվ: Կռիվ հանուն պղնձի,*
*Խնդությունը մեծ հույլ—պղնձական աշխարհում:*

*Մուրճի կռիվ ժայռի դեմ, դինամիտի գոռ վառոդ,*
*Պայքարի շունչ ու դրոհ—պղնձական աշխարհում:*

*Պայքար, դրոհ ու յեռանդ, ինչ խնդություն տանական,*
*Մեր դրոհն է միշտ անկանգ—պղնձական աշխարհում:*

*Ալլահվերդի, 31 թ.*

□□□



## ՊՂՆՁԻ ՇԵՓՈՐՈՒՄ

*Գրո՛հ, գրո՛հ նորից,*
*Ջարկենք համառ, գրոհ,*
*Թող պղինձը յեռնի*
*Ու շառաչի:*
*Մենք հանում ենք նրան—*
*Մկանների ուժով,*
*Ու շեփորում խինդը—*
*Մարտականչի:*

*Շախտյորական բանակ,*
*Հաստատ ու վեհ մարտում.*
*Ու գրոհվող անթիվ,*
*Անթիվ մկան:*
*Միշտ յեռում է խինդը*
*Մեր բորբ սրտում,*
*Ու պայքարի տենչը*
*Պղնձական:*

*Մեր ձեռքերում մուրճեր*
*Ու կիրկաներ խրոխտ,*
*Մեր հարվածը հաստու*
*Մութ շախտերում՝*
*Մեր կամքը դարերի*
*Կամքն է անհողդողդ,*
*Դարերի ձեռքն է*
*Յեռում մեր սրտում:*

Մենք հանում ենք պղինձ
Ջանքերով մեր անդուլ,
Պայքարակամ ենք,
Միշտ գրոհում,—
Դեպի շախտերը
Յեվ մութ ու խուլ
Յերկրի բորբ սիրտը
Այն բաբախուն:

Գրո՛հ, գրո՛հ նորից,
Զարկենք համառ, պինդ.
Թող պղինձը յելնի
Ու շառաչի:
Մենք հանում ենք նրան—
Մկանների ուժով,
Ու շեփորում խինդը—
Մարտականչի:



ԱՌԱՎՈՏ

Առավոտն է ցրում իր խրձերը լուսե
Ու զարթնում է իմ մեջ աշխատանքը կարոտ,
Իմ սիրելի Սեդա, նորից պետք է ուսենք—
Մեր կառուցման գործն այս առավոտ:

Ահա զարթնում է յերկիրն աղմկոտ
Ու մաքառում է տոկուն ու անդուլ.
Տեմպի ու թափի նոր առավոտ է,
Տեմպի մարտիկ ենք և յե՛ս և թե դո՛ւ:

Ահա տեսնում ես յելած, բարձրացած—
Այն գիգանտները վիթխարահսկա,
Այն վեհ շենքերը մեր յերկնասլաց
Յեվ բետոնակուռ, և արևվկա:

Վորոնց ամեն մի կերտը նրբին
Տեսել է պինդ ու թեժ պայքար,
Տեսել գրոհը մկանների
Ու կամքերը լեռ ու կուռ քար:

Ահա դառնում են մաշինները ժիր,
Գոռում, խոսում են հար յերկաթաձայն,
Սիրելի Սեդա, այս մեր յերկիրն է
Դասակարգի՝ կուռ կամքով բարձրացած:

Մենք ել ենք ամեն այդ գիգանտներին
Ու վեր խոյացող շենքերին այս կուռ,
Մեր ուժը՝ նրանց բետոն բերդերին,
Տքնել, ջանացել անդադար, անդուլ:

Վոր մեր յերկիրը դեռ ելի յելնի,
Ու խոյանքներով անահ բարձրանա:
Ու դասակարգի, կամքով Լենինի—
Գրավե անթիվ բերդ ու հաղթանակ:

Նորից զարթնել ե պողպատ առորյան,
Վիթխարի տեմպից որն ե շառաչում.
Մկանների զոռ դրոհն ե անկանգ—
Կյանքի կառուցման այս մարտադաշտում:

Գոս. Լենինի Գրադարան
Госпубл. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.



ՀՀ Ազգային գրադարան
NL0359368

ԳԻՆԸ 60 ԿՈՊ. (3/4 մ.)

42597

З. Маргарян

# МЕДЬ И ПОБЕДА

Госиздат ССР Армении
Эривань—1932

